



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ
 ՅՈՒՆԱՅԱՅԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի, 24 Օգոստոսին, Ազգային Առաջնորդարանի առժամեայ գրասենեակին մեջ ընդունեց այցելութիւնը Լոս Անճելըսի Յունահայերու Միութեան վարչութեան ներկայացուցիչներուն, որոնք եկած էին Առաջնորդ Սրբազանը հաղորդ պահելու իրենց աշխատանքներուն ու անմիջական ծրագիրներուն:

Ներկայացուցիչները՝ Վարչութեան ատենապետուհի Տիկին Մարի Պիրեպիրեան եւ դիւանի անդամներ Բարշ. Նիկողոս Սրկ. Մազմանեան ու Տիկին Ռոզ Ալթունեան ընդհանուր գիծերու մեջ Առաջնորդ Սրբազանին զեկուցեցին այս միութեան աշխատանքներուն մասին: Միութիւնը հիմնուած է 1991ին ու այս տարի պիտի նշէ իր 15րդ տարեդարձը: Անկախ իր անդամներուն համար հաճելին օգտակարին կապող զանազան նախաձեռնութիւններէ ու հաւաքներէ, միութիւնը կատարած է երախտաշատ գործ, հանգանակային ձեռնարկներու ճամբով իր գոյացուցած գումարներէն առատաձեռնօրէն բաժին հանած են հայկական միութեանց, կրթական հաստատութեանց, ինչպէս նաեւ Հայրենիքին: Ներկայացուցիչները հաղորդեցին Առաջնորդ Սրբազանին, թէ յառաջիկայ 24 Սեպտեմբերին, որոշած են միութեան ննջեցեալներուն յիշատակին ունենալ հոգեհանգստեան արարողութիւն՝ Ս. Կարապետ Մայր եկեղեցոյ մէջ, Հոլիվուտ, իսկ 21 Հոկտեմբերին միութեան 15րդ տարեդարձը պիտի նշեն հանդիսաւոր ճաշկերոյթով մը:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց վարչութեան նուիրեալ աշխատանքն ու մաղթեց, որ միութիւնը վերանորոգ թափով շարունակէ իր երախտաշատ գործունեութիւնը:

**PRELATE MEETS WITH REPRESENTATIVES OF THE ASSOCIATION OF
 GREEK-ARMENIANS OF LOS ANGELES**

On Thursday, August 24, H. E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed representatives of the Association of Greek-Armenians of Los Angeles to the temporary Prelacy offices in Encino.

The representatives, Chairperson Mrs. Marie Birebirian, Treasurer Deacon Nigoghos Mazmanian, and Co-Treasurer Mrs. Rose Altounian, informed the Prelate of their general activities and upcoming projects. The Association, established in 1991, will celebrate its 15th anniversary this year. Throughout the years, it has undertaken

various benevolent works including providing aid to Armenia, Armenian organizations, and educational institutions via its fundraising events. The representatives also conveyed to the Prelate that they have asked to hold requiem services for departed members of the Association on Sunday, September 24th, at St. Garabed Church in Hollywood. A banquet to celebrate the 15th anniversary of the organization will be held on October 21st.

The Prelate highly commended the dedicated services of the Association and wished them success in their endeavors.